



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ս Ո Ւ Ր Բ Ղ Ե Վ Ո Ն Դ Յ Ա Ն Ք



Եր ազգային-եկեղեցական պատմության մեջ Ս. Ղևոնդյանց անունն ու նահատակությունը գրավում են բացառիկ կարևոր տեղ։ Ս. Ղևոնդյանց նահատակությունը և խնկելի հիշատակը սերտորեն կապված են 451 թվականի Վարդանանց հերոսամարտի պատմության հետ։

Նրանք էին՝ Ս. Ղևոնդյան, «վասն Յիսուսի և վասն Հայրենեաց» մղված հերոսական պայքարի ոգեշնչողներն ու կազմակերպիչները։ Նրե մինչև Ավարայրի հերոսամարտը հայ հոգևորականները բանակ էին մտնում նահատամարտի միջոցին որպես աղոթողներ, Ավարայրում հոգևորականներն էլ ռազմի դաշտ իջան, որպես զինված մարտիկներ կռվելու նշմարտության և ազատության բռնամիների դեմ։

Վարդանանց ֆաշամարտիկ հայրենասերների հետ նահատակվեցին նաև Ս. Ղևոնդյան, «զի զեռյն նահատակութամբ նահատակեցաւ և Աշխարհս Հայոց» (Փարպեցի)։

Ս. Ղևոնդյանց նահատակ հոգևորականների մեջ բացավառ և հոգեկից եկեղեցականներից մեկն էր Վանանդեցի Ղևոնդ երեցը, թե՛ խոսքով և թե՛ գործով, «Աւարայրի արծիւ, այրն հաւատարիմ և նշմարտապաշտ, լուսաւորիչն ամենեցուն Ղևոնդի՛, սուրբ վարդապետ... ծաւալեալ լոյս գիտութեան յոգիս արանց կատարելոց»։

Ղևոնդ երեցի անունով, նահատակ հոգեվորականների ամբողջ խումբը կոչվեց «Ղևոնդեան ֆանանայք»։

Ս. Ղևոնդյանը նահատակվեցին 454 թվականի հուլիս ամսի 31-ին, Ապար աշխարհի

Ռեան գյուղի մոտ, Վարդանանց նահատակությունից երեք տարի հետո, բանտի, ախարի, շարշարանքի դաժան տարիների կենդանի նահատակությունից հետո։

Նահատակված հոգևորականների մեջ էին Հովսեփ կաթողիկոս Հոռոցմեցին (Վայոց ձորից), Ռշտունյաց Սանակ եպիսկոպոսը, Վանանդեցի Ղևոնդ երեցը, Նդեգիկցի Արշեն երեցը (Քազրեանդ գավառից), Մուշե երեցը (Աղբակից), Սամվել երեցը (Այրարատի Արած գյուղից), Քաջաշ սարկավազը (Ռշտունիից), Արահամ սարկավազը (Արած գյուղից), և Դենպետը (Նյուշապոն ֆաղափից)։

Ս. Ղևոնդյանց լուսապայծառ անունն ու սուրբ հիշատակը, որպես հայ հավատի ֆաշարի նահատակների և հայրենասեր հոգեվորականների, նվիրական ու բանկ են եղել մեր պատմության ողջ ընթացքում, հատկապես հայ հոգևորականության և մասնավորաբար Հայ Եկեղեցու կյանքի համար։ Ս. Ղևոնդյանց անձնուրաց նահատակությունը, մահվան դեմ ֆրիստոնեական խիզախումը հանուն հայ հավատի և Հայրենի սուրբ հողի, խորունկ ներշնչման և խանդավառության անսպառ աղբյուր են հանդիսացել մեր լուսաբնակ, հավատավոր նախնիների համար։

«Ոչ յօժարիմք զբշուստութիւն մերոյ ազգիս ռդբար»։

Ս. Ղևոնդյանց նահատակության ոգով և խորհրդով է ապրել ու ստեղծագործել Հայ Եկեղեցին։ Նրանց անձնագոհությունը հոր բափ, հոր լիցք է տվել հայ հոգևորականության՝ ծառայելու և ի պահանջել հարկին մեռնելու հանուն այն սրբությունների և վեճ

գաղափարների, որոնց համար ՄԵԲԱՆ ՂԵՎՈՆՈՅԱՆԻ, զբաղվածի ԱՊՐԻՆ Հայաստանյայց եկեղեցին և հայ ժողովուրդը:

Ե դարձ մեր պատմության բացառիկ ու նշանակալից դարաշրջաններից մեկն է, որն իր պատմական հարուստ իրադարձություններով իր անհնջելի և խոր դրոշմն է դրել մեր ողջ պատմության վրա:

Ե դարի առաջին կեսերին, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի գլխավորությամբ, Հայաստանում ստեղծվում է հոգևոր մշակութային անկախ ընթաց մի շարժում, պայքար մղելու համար հանուն Հայ եկեղեցու և հայ մշակույթի ինքնուրույնության: Այդ պայքարը առաջ էր տարվում մեծ եռանդով, խաղաղ ճանապարհով՝ դպրության, գրականության մի փառաշուքով: Դարի երկրորդ կեսերին, Ավարայրում, պայքար փոխադրվում է ազգական հողի վրա, բնդունելով ժողովրդական լայն ապստամբության բնույթ: Ավարայրի հակառակորդ շարունակությունն էր գեներալ այն պայքարի, որն սկսել էին դարի սկզբներին Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը իրենց աշակերտներով:

Ինչպես մշակույթի պայքարի, այնպես էլ 451 թվականի ազատագրական պայքարի ընթացքում առաջին գծի վրա էին կանգնած մեր բարգմանիչ վարդապետները և նրանց աշակերտները՝ Ս. Ղևոնդյան:

Ս. Թարգմանիչները և նրանց արժանավոր աշակերտները՝ Ս. Ղևոնդյան միաժամանակ մեծ հայրենասերներ էին, որոնք կոչվում էին և՛ զրոյվ և՛ սրով, հանուն հայ հավատի, հանուն Հայրենիքի և նրա սրբությունների:

Հիշատակելի և փառավոր ուղի է անցել հայ հոգևորականությունը Ե դարից մինչև մեր օրերը, իբրև ոգեշնչող ու կազմակերպող մեր ժողովրդի հերոսական ազատագրական մարտերի: Ս. Ղևոնդյանը նահատակության արտառույ պատմությունը մասնավորաբար և ընդհանրապես հայ հոգևորականության կյանքի և գործունեության պատմությունը հարուստ է մեր ժողովրդի ազգային գիտակցությունը կերտող ու անշեշ պանդոկ ներշնչման, արիության, անձնագոհության և հերոսության դրվագներով:

Հայ հոգևորականը անցյալում եղել է մեր մտավոր լուսավորության, մեր մշակույթի ստեղծման, զարգացման և պահպանման համեստ աշխատավոր: Մեր հոգևորականները իրենց մտքի լույսը, հոգու գեղեցկությունը, տեսիլը, բոխքը հավերժացրել են մի կտոր մագաղաթի կամ մի կտոր աղյուսի վրա, և եկեղեցու ու Հայրենիքի սիրով վառված, մեր Հայրենի աշխարհի հազարավոր վանքերի մոայլ ու անհյուսիս պատերի մեջ: շատ հաճախ լինում էր, որ կամ մի

կտոր նշխարով կերտել են մեր հերոսական պատմությունը, հայ հոգու, հայ հավատի պատմությունը:

Ս. Ղևոնդյան և նրանց արժանավոր հաջորդները, մեր սուրբ հայրապետներն ու եռամեծ վարդապետները, շատ պայծառ ու խորունկ գիտակցությունն են ունեցել բխստունեական պատվիրանների ու ազգային սրբությանը նկատմամբ, և որոնց հաղթանակի համար մի վայրկյան իսկ չեն վաճառել զոհելու իրենց կյանքը: «Ոչ ի կապանաց զանգիտեն և ոչ ի գազանաց երկրն չին... զման փան գկեանս ընտրեն»: Եվ այս ոգին, դարերի հետ, սրբազան ժառանգությունը, կրակե կտակն է եղել հայ հոգևորականության:

1500 տարիներ բաժանում են մեզ Ղևոնդյանց հերոսական ծանր օրերից, մոայլ ժամանակներից, բայց չի բառամել նրանց պայծառ անունն ու խնկելի հիշատակը հայ հոգիների անդաստանի մեջ:

Ս. Ղևոնդյանց փառքի հոգևորականների հիշատակը այսօր էլ խանդավառում է մեզ իրենց հերոսական կյանքի և նահատակության ամբողջ գեղեցկությամբ:

«Ս. Ավետարանը նահաշում ենք որպես մեր հայրը և իբրև մայր՝ Առաքելական Կարողիկե եկեղեցին»:

Դարերի ընթացքում հայ հոգևորականը, հավատարիմ նախնյաց ավանդություններին, իր ժողովրդի հետ ապրեց իր արյունոտ Գողգոթան: Քաջ հովվի արյունը խառնվեց միշտ հավատացյալ հոտի արյան հետ: Քշեմամ սուրբ միասին հենեց հոտն ու հովվին, որոնցից շատերը «հարկոծեցան, սղոցեցան, կախեցան, սպանվեցան սուր մեռան»:

Այսպես եղավ 451 թվականի վարդապետ հերոսամարտի օրերին և այսպես եղավ նաև վերջին ահավոր մեծ եղեռնին՝ 1915 թվականի տարագրության արյունոտ օրերին, երբ նահատակվեցին մեր նոր Ղևոնդյանները:

Հայ եկեղեցու և եկեղեցականության այդ մեծ նահատակությունից հետո, մեր եկեղեցին դեռևս չի կարողացել ոտքի կանգնել այդ ահավոր հարվածից:

Այսօր, Ս. Ղևոնդյանց և մեր լուսաբնակ հայրապետների ոգուն և հավատին հակառակ էրևույթներ են նկատվում Հայ եկեղեցու ծոցում: Հատկապես Սփյուռքում մոայլ ամպեր են կուտակվում Հայ եկեղեցու պայծառ երկնքի վրա: Այդ տխուր փաստերի մասին են խոսում Անթիլիասի և Երուսաղեմի եկեղեցական տագնապետները: Մոռանում ենք մեր եկեղեցու մեծ նահատակներին, շեղվում ենք նրանց նահապարհից, մեր բուն կոչումից:

Այսօր, ավելի քան երբեք, մեզ՝ հոգևորականներին անհրաժեշտ է Ս. Թարգմանչաց հոգևոր գիտակցությունն ու հայրենասիրությունը, Ս. Ղևոնդյանց հավատի և նահատակության ոգին, նախնական վանականի հեգուրությունը, Շնորհալու հոգու փառքությունն ու Բրիտանական խոնարհությունը, Տաթևացու նախնականությունն ու մեր մյուս բոլոր լուսաբնակ հայրերի, նահատակների, եռամեծ վարդապետների շունչն ու ոգին:

Վեհափառ Հայրապետը հայ հոգևորականության ուղղած հունվար 14-ի Խ սրբատառ կոնդակում հանգամանորեն վերլուծում է մեր հոգևորականության փառավոր անցյալին և գործունեության խորք ու ոչ շինիչ այդ տխուր երևույթները, որոնք դժբախտաբար բույն են դրել մեր հոգևորականներից ոմանց սրտում: Վեհափառ Հայրապետը Խ կոնդակում խոսում է հոգևորականի կոչման բարձրության և սրբության մասին. «ԻՆՉ ՎՍԵՄ ԵՎ ԻՆՉ ԳԵՂԵՑԻԿ Է ՀՈԿԵՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ, ԱՅՆ Է՛ ՄԻՋՆՈՐԴ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԵՎ ՕԳՆԵԼ, ՈՐ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ ՍՈՐՎԻՐ ԱՍՏՈՒԾՈՒՄՈՏԵՆԱԼ ԵՎ ԻՐԵՆՑ ՀՈԿԻՆԵՐՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐԶԸ ԿՏԵԼ: ԱՍՏՎԱԾԱՅԻՐ ՍԻՐՈ ԿՈՐԾԻՔ ԵՔ ԴՈՒՔ ՋԵՐ ՀԱՎԱՏԱՅՑԱԼՆԵՐՈՒ ԾՈՅԻՆ ՄԵՋ, ՈՒՍՈՒՑԱԼՈՂ ԵՔ ԵՎ ԴԱՏՏԻԱՐԱԿ, ՍՐԲԱՅՆՈՂ ԵՎ ՄԵԻԹԱՐՈՂ, ԵՎ ԲՈՂՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՆԵՏԻՐ ԴԹԱՌԱՏ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՐ»:

Այս իսկ պատճառով, առաքելաշավիղ Հայրապետը հորդորում է. «ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՐԱՎՐ ՊԵՏՔ Է ՀԱԳԵՑՆԵՆՔ ԾԱՌԱՅԵԼՈՎ: ԵԿԵՂԵՑԻՐ ՄԵՋ ԻՇԽԵԼ ԿՆՇԱՆԱԿԵ ԾԱՌԱՅԵԼ: ԵԿԵՂԵՑԻՐ ՄԵՋ ԱՌԱՋՆՈՐԴԵԼ ԿՆՇԱՆԱԿԵ ՆՎԻՐՎԻԼ: ԵԿԵՂԵՑԻՐ ՄԵՋ

ԲԱՐՁՐԱՆԱԼ ԿՆՇԱՆԱԿԵ «ՄԵԾԱՆԱԼ ԿՈՐԾՈՎՔ ԲԱՐՈՒԹԵԱՆ»:

Նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետի նպատակն է Խ հոգևոր զավակների, Հայաստանյայց եկեղեցու «զինուորեալ սպասաոր»-ների մեջ այս օրերին զարթեցնել նախնայաց հատուկ հովվական կոչման ոգին, այնպիսի վարժով և ծառայության ոգով, որ համապատասխան լինի հոգևոր պաշտամունքի և սպասավորության վսեմության, սրբության և ահավորության և մեր փառապանծ նախնայաց հոգևոր ավանդություններին: «Մեք առանկ քան զամենեւեան ունիմք պէտս հոգւոց բժշկութեան»,— գրում է Շնորհալին:

Այսօր հոգևորականներից, եկեղեցու սպասավորներից ոչ ոք չի պահանջում Ս. Ղևոնդյանց նման նահատակություն: Սակայն այդ մեծ ու փառամարտիկ նահատակների անձնագրության ոգին պետք է միշտ վառ ու կենդանի մնա հայ հոգևորականի կրծքի տակ:

Ս. Ղևոնդյանց սրտառույ և անձնուրաց նահատակությունը, պայծառ անունն ու խնկելի հիշատակը բող այսօր և ընդմիշտ ապրեն մեր հոգում:

Ս. Ղևոնդյանց... «Առաջնորդքն Հայաստանեայց», «Քահանայք սուրբ լուսածնունդ զաւակօք և պարծանք Հայաստանեայց»:

Ս. Ղևոնդյանց հիշատակը հարգելու և ոգեկոչելու ամենահիշտ ուղին է՝ ապրել ու գործել, հավատալ ու եվիրվել Հայ եկեղեցուն և հայ ժողովրդին այնպես, ինչպես Ղևոնդյանց իրենց օրերում: Արդարև, Ս. Ղևոնդյանց անձնուրաց նահատակությունը, հայ հավատի այդ դյուցազնամարտի «համբան պատմեսցի մինչև ցյաիտեան»:

«ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԿԱՐՈՑ ՕՐԶՆՈՒԹԵԱՄՐ ԵՂԻՑԻ»:

